

## Գիտական նորութիւններ

ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՓՈՍՏ: Հարտարապետ Պիսցիչէլլին մի գիւտ է արել, որ ամբողջովին պէտք է կերպարանափոխ անէ նամակների ու լրագիրների առաքման գործը: Այսուհետև նամակները պիտի ուղարկուին ելեքտրականութեան միջոցով: Այս բանի գործադրութիւնը վերին աստիճանի պարզ է: Ամէն մի թելը կարող է պահել 200 ցէնտնէրի չափ ծանրութիւն, և թելերի վերայ լարմարեցնում են առանձին տեսակ ալիւմինի արկղներ, ուր և լցնում են թղթակցութիւնները: Իւրաքանչիւր արկղ կարող է տեղաւորել իւր մէջ, գրեթէ 2000-ի չափ լրագիր: Այս նոր գիծը շինելու վերայ ծախս կլինի ամեն մի քիլոմետրին 3000 Ֆրանկ: Ահադին ժամանակ կվաստակենք ելեքտրական փոստով: Յալտնագործողի պայցուցութիւնները ստուգելու համար շուտով փորձեր են լինելու Հոտով մի ու Նէպպոլի միջև:

ԱԴԻԲԵՆՕԼԻՆ: Մի նոր բան է գտնուել, որին վիճակուած է բաւական կարևոր դեր խաղալ բժշկականութեան մէջ: Ամերիկացի քիմիկոսները նոր միջոց են գտել, որ ոչնչացնում է դրալմոնութիւնն ու հեռացնում է արեանհոսութիւնը: Այդ միջոցն անուանել են «ադրէնօլին»: Ամենից հետաքրքրականն այդ նոր միջոցի ծագումն է: Կաթնասուունների գործարաններում, երկկամների մօտ, գտնուում են մանրիկ խուլեր, դեղահատների ձևով: Ահա այս մանրիկ հանգոյցներում հէնց պարունակուում է այդ թանկագին միջոցը: Ամերիկական սպան դանոցներում ամէրիկացի-քիմիկոսները, հետազօտելով այդ խուլերը, ճշնում էին իմանալ, թէ ինչ բանի համար են սահմանուած այդ մանրիկ դեղահատերը կենդանական մարմնակազմի մէջ: Քիմիական վերլուծութեան հիթարկելով այդ խուլերը, նոքա, վերջիվերջօյ լաջողեցան հանել նորանից մանր սպիտակ դառնահամ ըիւրեղիկներ: Լեզուի վերայ դրած ժամանակ նոքա առաջ հն բերում ժամանակաւոր համրութիւն:

Ադրէնօլինը լուծուում է ջրում, բայց այդ միջոցը ներսը տալ չի կարելի, որովհետև խիստ թանկ է և անմատչելի ուրի իսկ հարուստ հիւանդներին: Մէկ քիլօ ադրէնօլինը 200,000 Ֆրանք արժէ: Այնպիսի քանակութեամբ ադրէնօլին պատրաստելու համար, որ կայելի լինէր մի սրուալ լցնել, պէտք է դոնէ մի ամբողջ հոտ եզ: Ադրէնօլինը պատկանում է շատ սաստիկ ներգործող դեղերին: Նորա միայն մի կաթիլը լուծուած մի լիտր ջրի մէջ կաղմում է մի հեղուկ, որով եթէ թրջենք՝ անմիջապէս կոչնչացնէ վարդագոյն ներկը: Արիւնը հեռանում է այդ տեղից և այլ նսլած չի դառնում:

Մաղասամաչկերի վիրահատութեանց ժամանակ ադրէնօլինը այնպիսի ծառայութիւններ է մատուցանում վիրաբուժութեան, որոնց մասին երազել անգամ չէր կարելի մինչև



այժմ: Վիրաբույժը, կօկախնով ոչնչացնելով կտրելու տեղի զղայնութիւնը, ներմուծում է աղբննօլինը: Գորա շնորհիւ նա հնար է ունենում անարգել դործ կատարել, որովհետեւ արիւնը չէ թափուում վիրքից կամ կտրուածքից և դանակի գործողութիւնը դեռտինը չէ ողողում: Բժիշկը վախենալու ոչինչ չունի որևէ ակամայ շարժումից, որ կարող է լինել ցաւից կամ ծակոցից: Նորա աչքի առաջ ամեն բան պարզ է. նա առանց արգելքի լուանում է կտրած տեղը և խցում: Վիրաբույժի ձեռքը գործում է ազատ և հանդարտ ինչպէս դիակի վերալ, և ոչ կենդանի մարդու: Պէտք է ասել, որ աղբննօլինը գործադրելի չէ բոլոր վիրաբույժութիւնների ժամանակ:

Այն ամեն դէպքերում, երբ գործ ունինք մաղասամաչկի հետ և լեղուր, բերանի խոռոչի, քթի և մանաւանդ աչքի վիրահատութեանց հետ—նոր դեղը առաջնակարգ դեր ունի կատարելու: Քթի խոռոչի վիրահատութիւնը, այնտեղ ուր խիստ նեղուածք է և ուր ամենափոքր հպումը արեանհոսութիւն է առաջադնում, աղբննօլինի շնորհիւ, այժմ կարելի է փալլուն կերպով կատարել: (Мозаика)

ՇԻՃՈՒԿ ԿԱՊՈՅՏ ՀԱՁԻ ԴԷՄ: Բրիւսայի բժիշկ Լէրիօն գտել է բուժիչ շիճուկ այս դարհուրելի մանկական հասակի հիւանդութեան դէմ, որին ոչ մի դեղ չէր մօտենում մինչև այժմ: Լէրիօն կապուտ հազով հիւանդների խորխի մէջ գտաւ մի տեսակ բացիլ, որ նա համարում է այդ դեղի պատճառը: Այդ բացիլները լուծուածքը Լէրիօն սրսկեց ձերին, և ալպիսով նոցա դարձրեց անմեծենալի կապուտ հազին: Հէնց այս պատուաստած կենդանիների շիճուկը երևեցաւ իբրև մի թանկագին բուժիչ միջոց: Լէրիօն շատ գոհ մնաց ստացած հետևանքներից: «Եթէ, ասաց նա,— այս շիճուկով սկսում ենք բժշկել հիւանդուի եան հէնց սկզբին, բոլոր երևութեանքը սկըսում են 2—3 օրից անցնել: Թէ ցնցող հազը, թէ փսխելը արագութեամբ պակասում են: Իսկ եթէ շիճուկը գործ ենք դնում հիւանդութեան վերջին շրջաններում, նա ներգործում է բարելավող կերպով, բայց բժշկութիւնը ընթանում է շատ դանդաղ: Սակայն, այս դէպքերումն էլ անխորժ նշաններ անլալտանում են 8 օրում:» 66 հիւանդներից, որոնց սրսկել են շիճուկից, միայն հինգը զգալի թեթևութիւն չզգացին: Սրսկումը կատարուած է տասը խորանարդ սանտիմէտրի քանակութեամբ: (Нов. об.)

ՕՐ ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ